

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2009թ. դեկտեմբերի 7-ի N 1056-Ն հրամանի

**ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 3101 «Հողաշինարարություն» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73 - Ն որոշմանք:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության համար մասնագիտացումներ սահմանված չէ:
3. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Տեխնիկ» որակավորում:
4. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

1) առկա,

2) հեռակա,

3) դրսեկության (էքստենատ):

5. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առկա ձևով իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

ա) կրթության առկա ձևով

միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 3 տարի

հիմնական ընդհանուր կրթության հիմքով 4 տարի

բ) կրթության հեռակա ձևով

միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 4 տարի

գ) դրսեկության (էքստենատ) ձևով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար

(դիստանցիոն) և դրսեկուրյամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը՝ 3852 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6642 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻԶԻՆ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ գրաղմունքները՝

- 1) Երկրաբաշխներ, քարտեզագիրներ և տեղանքագիրներ,
- 2) գյուղատնտեսներ և մասնագետներ՝ հարակից,
- 3) տեխնիկներ՝ արդյունաբերության և քաղաքացիական շինարարության,
- 4) գծագրողներ,
- 5) մասնագետներ՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության,
- 6) խորհրդատուներ՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության:

8. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտությամբ մասնագետի՝ գրաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) շինարարական օբյեկտները ճշգրիտ բնական տեսքի բերելն ապահովող երկրաբաշխական աշխատանքներ կատարելը, շենքերի, ջրանցքների, ճանապարհների շինարարության նպատակով հողահատկացումը հիմնավորելու համար աշխարհագրական նյութեր պատրաստելը,

2) տեղագրական, աշխարհագրական և այլ քարտեզներ, հողային կադաստրեր կազմելու և նորացնելու նպատակով տարբեր մեթոդներով երկրագնդի մակերևույթի տեղանքագրական նկարահանումներ կատարելը, նկարահանումների ժամանակ օգտագործվող գործիքները ստուգելն ու կարգավորելը,

3) երկրաբաշխական և տեղանքագրական աշխատանքներ կատարելու նորագույն մեթոդներ մշակելն ու կիրառելը,

4) հողի կառուցվածքը և բաղադրությունը, հողագործության և անտառաբուծության ագրոկլիմայական շրջաններն ուսումնասիրելը, հողերի բերրիության, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացնան ագրոտեխնիկական միջոցառումներ մշակելը, հակաէրոզիոն և ջրատեխնիկական պարզ կառուցվածքների շինարարությունը,

5) հետազոտություններ կատարելը, վայրի բնությունը պահպանելու և արոտավայրերը խնայողաբար օգտագործելու նոր մեթոդներ մշակելը կամ գործողները կատարելագործելը,

6) շինարարական նյութերի և հողերի նմուշների լաբորատոր ու դաշտային ստուգումներ կատարելը կամ դրանց օգնելը,

7) պարզ նախագծերի մշակմանը մասնակցելը, մասնագրեր և այլ տեխնիկական փաստաթղթեր կազմելը, պարզագույն հաշվարկներ կատարելը,

8) նախագծեր կազմելու համար տվյալներ հավաքելը և պահանջվող նյութերի ու աշխատանքի ծավալը և արժեքը որոշելը, նախագծերի իրացման համար անհրաժեշտ աշխատանքային ու նյութական ծախսերի քանակը և արժեքը մասնագրերին համապատասխան որոշելուն օգնելը,

9) դժվար պատճենահանվող և թվային տվյալներ պարունակող աշխատանքային գծագրեր, քարտեզներ ստեղծելու և փոփոխելու, թվային տեղեկատվություն պարունակող այլ կորագծեր մշակելու համար համակարգչային սարքավորումներ կամ փոխարկման աղյուսակներ օգտագործելը,

10) մասնագիտացման իր բնագավառում ընթերակայելը և գիտափորձեր, փորձարկումներ ու վերլուծություններ կատարելը,

11) տեսական ու գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրարելը,

12) գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում կիրառվող ժամանակակից մեթոդներին ու տեխնոլոգիաներին, բնական պաշարների և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին ու հողի քայլայնան դեմ պայքարի խնդիրներին առնչվող խորհրդատվություն մատուցելը,

13) այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը,

14) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

ԳԼՈՒԽ 3.

ԸՆԴԱԾՈՒՐ ՊԱՐԱՁԵՑԵՐ ՄԻԶԻՆ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՍ ԿՐԹՈՒԹՅԱՍ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»

ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՍ ՃԻՄԱԿԱՍ ԿՐԹԱԿԱՍ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱԲ

9. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,
- 2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
- 3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործուներով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարրերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
- 4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսնորման կարողության ձևավորում,
- 5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
- 6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
- 7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
- 8) աշխատանքային խնդիրի գործունեությունը կազմակերպելու, խնդիր անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,

- 9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՐԱՍՎԵՐ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՊԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆՎԱՏՄԱՍՐ

10. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
- 2) տիրապետել հայոց լեզվին,
- 3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
- 4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- 5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
- 6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
- 7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
- 8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
- 2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

ԳԼՈՒԽ 5.

ՊԱՐԱՁԵՑԵՐ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՉԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները:

1) Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարագող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող են վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում են մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները:

1) Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները:

1) Ուսումնական կարինետների երաշխավորվող ցանկը՝

- ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի,
- բ. ռուսաց և օտար լեզուների,

- գ. գծագրության,
- դ. գյուղատնտեսագիտության հիմունքների,
- ե. տնտեսագիտության,
- զ. գյուղատնտեսական և մելիորատիվ շինարարական մեքենաների,
- է. ավարտական աճվորիչ ատեստավորման նախապատրաստման,
- ը. համակարգչային լսարաններ:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. ուսուցման տեխնիկական միջոցների,
- բ. քիմիայի,
- գ. գեղեցիկայի և քարտեզագրության,
- դ. էլեկտրատեխնիկայի:

3) Սպորտային համալիր՝

- ա. մարզադահլիճ,
- բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կարինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախապարտական

պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

- 2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:
- 3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:
- 4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արիեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը հաճապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմանք սահմանվում են հետևյալ պահանջներում:

1) Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 3101 «Հողաշինարարություն» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

ԳԼՈՒԽ 6.

Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության օրինակելի ուսումնական դասընթացները

20. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշխնարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

- 1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,
- 2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,
- 3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,
- 4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

| ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» | |
|---|--|
| Սողուլի դասիչը | ԱՀՀ 4 - 09 - 001 |
| Սողուլի նպատակը | Այս մոդուլը նախատեսված է այն ուսանողների համար, ովքեր կարիք ունեն զարգացնել և ամրապնդել հաղորդակցվելու իրենց ունակությունները: Սողուլը կարելի է ուսուցանել ինչպես մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այնպես էլ առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Դա նշանակում է, որ դասավանդողները պետք է խրախուսեն և կիրառեն ուսանողների հնքնաբացահայտնան հնարավորությունների տարրեր մոտեցումներ, ինչպես օրինակ՝ դերային խաղերը, տեսանյութերը, մանուլի ուսումնասիրությունը և այլն: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կզարգացնի հաղորդակցության մի շարք կարևոր ունակություններ, ձեռք կբերի հնքնավստահություն, կկարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել ոչ միայն աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, այևս՝ անձնական կյանքում, ուղղողել և դեկավարել այլոց աշխատանքը: |
| Սողուլի տևողությունը | 54 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Սողուլի գնահատման կարգը | Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| ՈՒսումնառության արդյունք 1 | ՈՒսումնառության անձնական նպատակների սահմանման և սահմանների ինացություն: |
| Կատարման չափանիշներ | ա. կարող է սահմանել ուսումնառության անձնական նպատակները, բ. կարող է բացահայտել ուսումնառության անձնական նպատակների սահմանները, գ. կարող է պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, դ. կարող է ներկայացնել ուսումնառության տարրեր եղանակների սահմանումները: |
| ՈՒսումնառության արդյունք 2 | Պարզ թեմաների և տեքստերի մասին բանավոր / գրավոր / տեղեկատվական հաղորդումների իրականացման կարողություն: |
| Կատարման չափանիշներ | ա. կարող է օգտագործել բանավոր և գրավոր խոսքի ճիշտ կառուցվածք, բ. կարող է շարադրել պարզ տեղեկատվություն, կարծիքներ և գաղափարներ, գ. կարող է կատարել տեղեկատվության նպատակային առանձնացում և խմբավորում, դ. կարող է իրականացնել հաղորդում՝ ըստ իրավիճակի և լսարանի: |
| ՈՒսումնառության արդյունք 3 | Երկխոսություններ ու քննարկումներ նախաձեռնելու, պահպանելու, վարելու և եղրափակելու կարողություն: |
| Կատարման չափանիշներ | ա. կարող է կիրառել «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները. 1. պարզաբանումներ ստանալու ձգտումը, 2. գրառումներ կատարելը, 3. ամփոփելը, բ. կարող է ազատ կերպով ձևակերպել, արտահատել և պաշտպանել իր գաղափարները, նոտեցումները, տեսակետներն ու կարծիքները, գ. կարող է ցուցաբերել համոզելու և ներգրավելու կարողություն, դ. կարող է կատարել ճիշտ ամփոփում և եղրափակում: |
| ՈՒսումնառության արդյունք 4 | Սխեմաների, աղյուսակների, գծապատկերների, քարտեզների և նկարների մեկնաբանման կարողություն: |
| Կատարման չափանիշներ | ա. կարող է նախանշել սխեմաների, աղյուսակների, գծապատկերների, քարտեզների և նկարների նշանակությունն ու դրանց միջև եղած տարրերությունները, |

| | |
|--|---|
| | <p>բ. կարող է մեկնաբանման ընթացքում օգտագործել խոսքի ճիշտ և համոզիչ կառուցվածք:</p> |
| ՈՒՍՈՒՄՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 5 Կատարման չափանիշներ | <p>Փաստաթղթավորման կատարման կարողություն:</p> <p>ա. կարող է սահմանել տարբեր փաստաթղթերն՝ ըստ դրանց նշանակության, բ. կարող է նախանշել տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը, գ. կարող է կատարել տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորում:</p> |
| ՄՈՂՈՒԼԻ ԱՎԱԼՈՒՄԸ «ԱՍՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» | |
| Մողուլի դասիչը | ԱԱՕ 4 - 09 - 001 |
| Մողուլի նպատակը | <p>Այս մողուլը մշակվել է արտադրական կազմակերպություններում և գյուղացիական տնտեսություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողների մոտ գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հնտություններ ծևավորելու նպատակով:</p> <p>Այն անհրաժեշտ է արտադրական ծերնարկության / գյուղացիական տնտեսության բոլոր մակարդակների աշխատողներին:</p> |
| Մողուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մողուլի գնահատման կարգը | <p>Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p> |
| ՈՒՍՈՒՄՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1 Կատարման չափանիշներ | <p>Աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթների հմացություն:</p> <p>ա. կարող է լուսաբանել աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները, բ. կարող է ներկայացնել կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը, գ. կարող է պարզաբանել աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը, դ. կարող է նկարագրել աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ծերն ու մեխանիզմները, ե. կարող է բացատրել արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման ու հաշվառման կարգը, գ. կարող է պարզաբանել արտադրության տարբեր մակարդակների դեկավարների պատասխանատվությունն աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:</p> |
| ՈՒՍՈՒՄՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2 Կատարման չափանիշներ | <p>Կազմակերպություններում անվտանգության տեխնիկայի նորմերի և կանոնների հմացություն:</p> <p>ա. կարող է սահմանել տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների և փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները, բ. կարող է ներկայացնել էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, գ. կարող է պարզաբանել իրդեհաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, դ. կարող է բացատրել ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:</p> |
| ՈՒՍՈՒՄՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3 Կատարման չափանիշներ | <p>Արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջների հմացություն:</p> <p>ա. կարող է սահմանել արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները, բ. կարող է մեկնաբանել արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները, գ. կարող է բացատրել արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,</p> |

| | |
|---|--|
| | դ. կարող է ներկայացնել արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Արագին օգնության կազմակերպման և դրա համար անհրաժեշտ միջոցների իմացություն: |
| Կատարման չափանիշներ | ա. կարող է ճիշտ կատարել արհեստական շնչառությունը, բ. կարող է ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնումը, գ. կարող է դադարեցնել արմահոսությունը և դնել վիրակապ, դ. կարող է ցուցաբերել կոտրվածքների վիրակապման կարգը, ե. կարող է ցուցաբերել առաջին օգնություն՝ այրվածքների դեպքում, զ. կարող է ցուցաբերել առաջին օգնություն՝ հոսանքահարման դեպքում: |
| ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՍՏԱՐՁՎԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» | |
| Մողուլի դասիչը | ՀՕԴՀ-4-09-001 |
| Մողուլի նպատակը | Այս մողուլը նախատեսում է ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և Windows օպերացիոն համակարգին, տալ տարրական գիտելիքներ Microsoft Office փաթեթի WORD տեքստային խմբագրի և Excel հաշվարկային ծրագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթորթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, փաստաթորթերի պահպանման, տպագրման, հաշվարկային փաստաթորթեր ստեղծելու, խմբագրելու, պարզագույն խնդիրներ կազմելու և լուծելու, ինչպես նաև ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ: |
| Մողուլի տևողությունը | 72 ժամ |
| Սուտրային պահանջները | Չկան |
| Մողուլի գնահատման կարգը | Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ինանալ համակարգչի կառուցվածքը, .տիրապետել Windows օպերացիոն համակարգին |
| Կատարման չափանիշներ | ա. ինանա սիստեմային բլոկի կառուցվածքը, բ. ինանա մոնիթորի կառուցվածքը, գ. ինանա մկնիկի կառուցվածքը, դ. ինանա ստեղնաշարի կառուցվածքը, ե. ինանալրացուցիչ սարքավորումների մասին, զ. ինանա աշխատանքային սեղանը և նրա կարգավորումները , խնդիրների վահանակը, արագ թողարկման և ինոհիկացիոն վահանակները և նրանց կարգավորումները, Windows օպերացիոն համակարգի օրյեկտներն ու էլեմենտները, ֆայլ, թղթապանակ և պատուհան հասկացությունները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Հասկանալ WORD և EXCEL ծրագրերի նշանակությունը, կարողանալ բացատրել ծրագրերի կառուցվածքը, կարողանալ օգտագործել New, Open, Close և այլ ստանդարտ և ֆորմատավորման վահանակների վրա գտնվող գործիքներ |
| Կատարման չափանիշներ | ա. ինանա Microsoft Word և Excel ծրագրերի պատուհանների կառուցվածքը, բ. ստեղծել նոր փաստառուղթ Word և Excel ծրագրերով, գ. ինանա ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ (առանց ֆորմատավորման), մեջատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), թվանշաններ, դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ, ե. կատարել տարրական ուղղումներ և խմբագրումներ տեքստում, զ. փակել փաստառուղթը, ե. բացել առկա փաստառուղթը, ը. ինանալ Zoom գործիքի հնարավորությունները, թ. մուտքագրել և կազմել հավարկային փաստաթորթեր: |
| Ուսումնառության արդյունք 3 | Կարողանալ կատարել տեքստային և հաշվարկային փաստաթորթերի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ |
| Կատարման չափանիշներ | ա. նշել բառերը և տեքստային հատվածները, բ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում, զ. կատարել տողերի հավասարեցում, դ. փոխել միջտողային տարածությունները , |

| | |
|----------------------------|---|
| | <p>ե. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, գ. փոխել տեքստի գույնային ֆոնը Highlight գործիքով, է. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից, Ը. չեղալ հայտարարել (իրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները, թ. վերականգնել ֆորմատավորման չեղալ հայտարարված գործողությունները, ժ. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը, Ժ. Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել բորբ չափերը Paper Size ցուցակի օգնությամբ, Ժ.պատճենել տեքստը, Ժ.տեղափոխել տեքստը, Ժ.տողադրածել տեքստը, Ժ.համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 4 | Կարողանալ պահպանել փաստաթուղթը |
| Կատարման չափանիշներ | <p>ա. իմանա փաստաթորթերի պահպանման իմաստը, թ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, զ. պահպանել փաստաթորում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 5 | Կարողանալ կազմել և խմբագրել աղյուսակներ |
| Կատարման չափանիշներ | <p>ա. պատրաստել աղյուսակ, թ. աղյուսակի մեջ նույթագրել տեքստ, զ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, ե. ջնջել աղյուսակի տողերը և սյունները, զ. փոխել սյունակի լայնությունը Սկնիկի օգնությամբ, է. փոխել տողի բարձրությունը Սկնիկի օգնությամբ, Ը. փոխել աղյուսակի գծերի գույնը , թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 6 | Տեքստային և հաշվարկային փաստաթորթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ |
| Կատարման չափանիշներ | <p>ա. կարողանա գծագրել գրաֆիկական օբյեկտներ, թ. կարողանա գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով AutoShapes պատուհանի պատրաստի ծևերը, զ. կարողանա գծագրել կանոնավոր պատկերներ, դ. կարողանա ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ, պատճենել, պտտել, շրջել, փոխել չափերը, ե. կարողանա խմբավորել գրաֆիկական օբյեկտները, զ. կարողանա հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, է. կարողանա գծագրել տեքստային բլոկներ, Ը. կարողանա գունավորել գրաֆիկական օբյեկտները, թ. կարողանա տվյալականավորել գրաֆիկական օբյեկտները, ժ. կարողանա ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 7 | Կարողանալ տպագրել փաստաթուղթը |
| Կատարման չափանիշներ | <p>ա. նախադիտման ռեժիմում թերի փաստաթուղթը, թ. իմանա Print պատուհանի ֆունկցիաները, զ. տպագրի փաստաթուղթը:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 8 | Ունենալ ինտերնետում աշխատելու իմացություն |
| Կատարման չափանիշներ | <p>ա. իմանալ ինտերնետ հասկացության նշանակությունը, թ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը, զ. իմանալ ինտերնետային Դաստիարակությունը, դ. իմանալ History իրամանի նշանակությունը, է. իմանալ Favorites իրամանի նշանակությունը, զ. իմանալ Stop իրամանի նշանակությունը,</p> |

| | |
|--|--|
| | <p>է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,</p> <p>Ծ. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>Թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>Ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>Ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,</p> <p>Ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,</p> <p>Ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,</p> <p>Ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակությունը,</p> <p>Ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:</p> |
|--|--|

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՎՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

| | |
|-----------------------------------|---|
| Մողուլի դասիչը | ԸԱՀ-4-09-001 |
| Մողուլի նպատակը | Սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսորելու, դեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ: |
| Մողուլի տևողությունը | 54 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մողուլի գնահատման կարգը | Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| ՈՒսումնառության արդյունք 1 | Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և դրանից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.</p> <p>գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).</p> <p>դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 2 | Դրսորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.</p> <p>գ. առաջադրված հրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսերումներ.</p> <p>դ. ցուցաբերում է գործընկերոջը և դեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսորումներ:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 3 | Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդիհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>դ. թիմային աշխատանքի առաջադրված հրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:</p> <p>ե. ճիշտ վերաբերմունք է դրսորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.</p> <p>գ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային հրավիճակում:</p> |
| ՈՒսումնառության արդյունք 4 | Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի դեկավարի հետ: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և</p> |

| | |
|-----------------------------------|---|
| | <p>ճշտապահության կարևորությունը.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում դեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և դեկավարի իրավունքներն ու պարտականությունները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:</p> |
| ՈՒՏՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 5 | Դրսևորել քննադատական նշանառություն: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.</p> <p>բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համարում է առկա գիտելիքների հետ.</p> <p>գ. իրականացնում է կառուցղական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցղական քննադատության կարևորությունը:</p> |
| ՈՒՏՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 6 | Կառավարել սրբեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. ճիշտ է ներկայացնում սրբեսի կանխարգելման և անխուսափելի սրբեսին դիմակայելու մեթոդները.</p> <p>բ. ճիշտ է կազմում իր աշխատաքննային պլանը (պայմանական աշխատանքային պլան).</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:</p> <p>դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,</p> <p>ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարրերակ և գնահատում արդյունքը.</p> <p>զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.</p> <p>է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է տալ դրանց արագ ու արդյունավետ լուծումներ:</p> |

Այլուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարության» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

| ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ, ՄԵԼԻՈՐԱՏԻՎ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՅՑՈՒՄ» | |
|---|---|
| Մոդուլի դասիք | ՀՀ 4 - 09 - 001 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է բարձրորակ հողաշինարար մասնագետներ պատրաստելու, ընդհանուր նշանակության գյուղատնտեսական, մելիորատիվ և շինարարական մեքենաներն ուսումնասիրելու նպատակով: Այն անհրաժեշտ է նաև գյուղատնտեսական, մելիորատիվ և շինարարական մեքենաներին ներկայացվող աշխատանքային հիմնական պահանջներն ու մեքենաների դասակարգման մոտեցումներն ուսումնասիրելու համար: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| ՈՒՏՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1 | Գյուղատնտեսական մեքենաների իմացություն: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. կարող է ներկայացնել վար անող և փխրեցնող մեքենաներ,</p> <p>բ. կարող է ներկայացնել ցանք կատարող և վնասատուների դեմ պայքարի համար նախատեսված մեքենաները,</p> <p>գ. կարող է ներկայացնել հնձող և կալսող մեքենաները,</p> <p>դ. կարող է տարրեր գյուղատնտեսական աշխատանքների համար կատարել համապատասխան գյուղատնտեսական մեքենաների ճիշտ ընտրություն:</p> |
| ՈՒՏՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2 | Մելիորատիվ մեքենաների և սարքավորումների իմացություն: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. կարող է ներկայացնել ռոտորային և կոմբինացված խրանուղափորները,</p> <p>բ. կարող է ներկայացնել ջրանցքների հատակը և շեպերը</p> |

| | |
|--|---|
| | <p>հարթագոտող մեքենաները,</p> <p>գ. կարող է ներկայացնել բետոնե և երկաթբետոնե պատյան պատրաստող մեքենաները,</p> <p>դ. կարող է ներկայացնել էկրանապատման և սալահատակման մեքենաները,</p> <p>ե. կարող է ներկայացնել թփահատ և կոճղահան մեքենաները,</p> <p>զ. կարող է ներկայացնել քարհավաք մեքենաները և սարքավորումները,</p> <p>թ. կարող է ներկայացնել ջրման նախապատրաստող և արհեստական անձրևացման մեքենաներն ու սարքավորումները,</p> <p>ը. կարող է տարբեր մելիորատիվ աշխատանքների համար կատարել համապատասխան մելիորատիվ մեքենաների և սարքավորումների ճիշտ ընտրություն:</p> |
| ՈՒՍՈՒՄՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3 | Ծինարարական մեքենաների, սարքավորումների և գործիքների հմացություն: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. կարող է ներկայացնել առանցքակալների, ճոպանների, զսպանակների, վերականգնիչների և ուժային տեղակայանքների աշխատանքների սկզբունքը,</p> <p>բ. կարող է տարբերակել տարատեսակ տրակտորները, ավտոմեքենաները և կարապիկները,</p> <p>գ. կարող է ներկայացնել վերամբարձ կոռուպներն ու փոխադրիչները,</p> <p>դ. կարող է տարբերակել բեռնան և բեռնաքավման մեքենաները,</p> <p>ե. կարող է ներկայացնել հողափոր մեքենաները՝ միաշերտի և բազմաշերտի էքսկավատորները, բուլդոզերները, սկրեպերներն ու գլունները,</p> <p>զ. կարող է տարբերակել շաղախաբետոնային խառնուրդ պատրաստող, տեղափոխող և տեղադրող մեքենաները,</p> <p>թ. կարող է ներկայացնել ամրանների պատրաստման մեքենաները,</p> <p>ը. կարող է մատնանշել փայտամշակման հաստոցները,</p> <p>թ. կարող է ներկայացնել ցցային աշխատանքների համար նախատեսված սարքավորումները,</p> <p>ժ. կարող է տարբեր շինարարական և մոնտաժային աշխատանքների համար կատարել համապատասխան շինարարական մեքենաների, սարքավորումների ու գործիքների ճիշտ ընտրություն:</p> |
| ՍՈՂՈՌԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ԳԱՂԱՓԱՐ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ» | |
| Մոդուլի դասիչը | ՀՊԸ 4 - 09 - 002 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է ուսանողների մոտ հողի մասին ընդհանուր պատկերացում ձևավորելու և նրանց կողմից հողառաջացնող գործուները, հողի կազմն ու կառուցվածքը, հատկանիշները, աշխարհագրական տեղաբաշխման առանձնահատկությունները, ՀՀ հիմնական հողառաջական դրանց տնտեսական նպատակներով յուրացվածության մակարդակն ու օգտագործման ներկա վիճակն ուսումնասիրելու նպատակով: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Զկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| ՈՒՍՈՒՄՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1 | «Հող» և «հողմահարում» հասկացությունների, հողառաջացնող հիմնական մայրապարների և դրանց հողմահարման առանձնահատկությունների հմացություն: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. կարող է սահմանել «հողոյ» հասկացությունը,</p> <p>բ. կարող է սահմանել «հողմահարում» հասկացությունը,</p> <p>զ. կարող է ներկայացնել հողը, որպես բնական մարմին,</p> <p>դ. կարող է բացատրել՝ ի՞նչ է մայրապարը և որո՞նք են հողառաջանող հիմնական մայրապարները,</p> <p>ե. կարող է մեկնաբանել հողմահարման երևույթը և հողմահարման տեսակները (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական կամ օրգանական),</p> <p>զ. կարող է ներկայացնել հողառաջացնող տարբեր մայրապարների</p> |

| | |
|-----------------------------------|---|
| | <p>քիմիական, մեխանիկական և հանքարանական կազմը, է. կարող է ներկայացնել հողառաջացնող տարբեր մայրապարների հողմահարման առանձնահատկությունները:</p> |
| ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2 | Հողառաջացնող հիմնական գործոնների իմացություն: |
| Կատարման չափանիշներ | <p>ա. կարող է ներկայացնել հողառաջացնող գործոնների ընդհանուր սխեման, բ. կարող է բացատրել մակերևույթի անհարությունների (ռելիեֆի) ձևակազմական տարրերի հողառաջացնող դերը, գ. կարող է լուսաբանել տարածքի երկրաբանական հիմքի առանձնահատկությունների հողառաջացնող դերը, դ. կարող է պարզաբանել տարածքի ջրաբանաերկրաբանական առանձնահատկությունների հողառաջացնող դերը, ե. կարող է նկարագրել բուսածածկույթի հողառաջացնող դերը, զ. կարող է նկարագրել կենդանի օրգանիզմների հողառաջացնող դերը, է. կարող է ձևակերպել մարդու տնտեսական գործունեության հետևանքների հողառաջացնող դերը, ը. կարող է մեկնաբանել ժամանակի դերակատարությունը հողառաջացման ընդհանուր գործընթացում:</p> |
| ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3 | Հողի կազմի և կառուցվածքի իմացություն: |
